

ՀԻՆ ԹՈՒՐՔԵՐ

ՆԻՒԹԵՐ ՇԻՐՎԱՆԶԱԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս յայտնի է, 1911 թ. տօնւեց Շիրվանզադէի գրական երեսնամեայ գործունէութեան յորհեանը: Այդ առքիւ, Պոլսում, վաստակաւոր վիպասան Տիգրան Կամսարականի նախաձեռնութեամբ ու ընդհանուր խմբագրութեամբ եւ 19 արեւմտահայ գրողների մասնակցութեամբ լոյս տեսաւ Շիրվանզադէին նիրւած մի հատոք: Հատոքի խմբագրութեան ու տպագրութեան գործնական աշխատանքները յանձնաւած էին պ. Արամ Անտոնեանին:

Հատոքի լոյս տեսնելուց յետոյ, պ. Ա. Անտոնեանի անձնական դիւտանում պահել էին Շիրվանզադէի ձեռքով գրւած ինքնակենսագրութիւնը եւ պ. Տ. Կամսարականին կամ պ. Անտոնեանին ուղղւած մի շարք նամակներ: Այժմ, երբ Շիրվանզադէն արդէն մեռած եւ նըրա կեանքն ու գործը այլեւս պատմութեան սեփականութիւնն է, մենք օգտելով պ. Ա. Անտոնեանի բարեհանութիւնից՝ հրատարակութեան ենք տալիս այդ նիւթերը:

Առաջինը Շիրվանզադէի ինքնակենսագրութիւնն է, գրւած պ. Ա. Անտոնեանի խնդրանօֆ: Վերջինս օգտելով նրանից, ժողովածուի համար կազմել էր Շիրվանզադէի կենսագրութիւնը: Ինքնակենսագրութեան ձեռագիրը մնացել էր անտիպ եւ այստեղ լոյս է տեսնում առաջին անգամ:

Երկրորդը 1908 թ. Պոլսի հայ թերթերին ուղղւած մի նամակ է Շիրվանզադէի թատերախաղերի ներկայացման առքիւ:

Այս գալիս են պ. Տ. Կամսարականին եւ պ. Ա. Անտոնեանին գրւած չորս նամակներ՝ ժողովածուին վերաբերող խնդիրների մասին: Նամակներ, որոնց մէջ բաւական ցայտուն կերպով արտայայտած է Շիրվանզադէի իւրայատուկ նկարգիրը:

Ամբողջ նիւթը մենք հրատարակում ենք առանց որ եւ է փոփոխութեան եւ, բնականարար, հեղինակի ուղղագրութեամբ. պատմութիւնը պատմութիւնն է, լաւ էլ, վատն էլ պէտք է մէջտեղ գայ:

ԽՄԲ.

ՇԻՐՎԱՆԶԱԴԱԳԵՒԻ ՆԱՄԱԿԸ Պ. Ա. ԱՆՏՈՆԵՍՆԻՆ

Յարգելի եւ սիրելի արուեստակից,

Պատիւ ունեցայ Ձեր սիրալիր նամակն ընդունելու։ Անչափ պարծենում եմ, որ հաճել էք ընդունել մեր համակրելի բարեկամ Տիգ։ Կամսարականի առաջարկը նոււաստիս կենսագիրը կազմելու։ Վերին աստիճանի հաճելի պիտի լինի ինձ համար տեսնել Ձեր աշխոյժ եւ վարվուն գրչի տակ շունչ առած իմ համեստ անցեալի պատկերները, որ ըստ մեծի մասամբ մռայլ են։

Յայտնելով կանխաւ անկեղծ շնորհակալիքս, շտապում եմ կատարել Ձեր պատուէրը ամենայն սիրով, հաղորդելով այն, ինչ որ յիշում եմ եւ ինչ որ կարեւոր եմ համարում իմ կեանքից։

Միայն ինդրում եմ այս բոլորը գրել Ձեր կողմից եւ ոչ իբրև ինքնակենսագրութիւն։

II

ՄԱԿԱԲԻԹԻՒՆ

Իմ ծննդեան թիւը ես ճիշդ չը գիտեմ։ Հանդուցեալ մայրս առւմ էր, թէ ծնւել եմ ապրիլի 7-ին 1858 թուին։ Իմ ծննդավայրն է Աղուանից աշխարհի Շամախի քաղաքը։ Պատմական Շիրվանը, որ յայտնի է իւր սոսկալի երկրաշարժներով եւ սքանչելի բնութեամբ։ Այստեղ գարուն եւ ամառ գիշերը մինչեւ լոյս երգում են սոխակները։ Շրջակայքը լի են սառնորակ աղբիւրներով, հրաշալի տեսարաններով։ Խիտ անտառներ չկան, կայ հարուստ բուսականութիւն, վայրի ծաղիկների շքեղ բուրաստաններ։ Երկինքն այնքան կապոյտ է, օգն այնքան յստակ ու մեղմ, որքան կովկասի եւ ոչ մի վայրում։ Հրաշալի երկիր, երկրային դրախտ։

Ծնողներս եղել են անդրագէտ։ Հօրս անունն էր Մինաս, որին սովորաբար կոչում էին «Ռւստա Մինաս»։ Մօրս անունն էր Ռվաննա, որին քաղաքում անոււանում էին «Գէօպալ Սօնա» իւր անզուգական գեղեցկութեան շնորհով։ Խսկական անունս է Ալեքսանդր Մոլոխեան։

Հայրս սկզբում եղել է արհեստով դերձակ, ապա տորոնի *) արդինաբեր :

Մինչեւ 17 տար. հասակս կեանքս անցուցել եմ ծննդավայրում : Մանկութիւնս ընդհանրապէս եղել է ոչ զուարթ : Կեանքի դաժանութիւններին ծանօթացել եմ շատ կանուխ եւ շատ վաղ եմ ծաշակել նրանց : Տարուայ մեծ մասը հայրս բացակայ է եղել քաղաքից : Ես շատ հաղիւ եմ վայելել նրա գուրգուրանքը, նոյն իսկ չեմ յիշում վայելել եմ արդեօք : Աւելի յիշում եմ նրա խստութիւնները : Այսօր էլ վառ կենդանի է իմ աչքերի առջեւ նրա խոժոռ կերպարանքը : Վերին աստիճանի բարձրահասակ (ամբողջ նահանգում իւր ժամանակին նրա հասակի մի ուրիշը չի եղել), խոժոռ դէմքով, կապոյտ աչքերով, շիկաւուն բեխերով, կնճոռու ճակատով, թաւ յօնքերով : Բարկութեան բովէներին նրա ձայնը հնչում էր սուր, բարակ, մի բան, որ չէր համապատասխանում նրա խոչոր կազմըւածքին : Բաւական էր իմ կողմից մի թեթեւ սխալ, եւ նա պատրաստ էր ինձ պատժել : Յաճախ նա մի ճեռով բարձրացնում էր ինձ փետրի պէս օդի մէջ, եւ ես ինձ զլում էի մի բարձր ծառի գագաթին : Սպասնում էր ինձ այստեղից վայր ձգել, բայց երբէք չէր գցում : Նա ինձ սիրում էր իւրովի եւ բնաւ իւր սէրը չէր արտայայտում սովորական ճեռով, փաղաքշանքներով ու համբոյլներով : Բայց մօրս անվերջ գուրգուրանքները փոխարինում էին նրանց :

Հայրս յայտնի էր իւր շիտակ, անշեղ բնաւորութեամբ եւ ուղղամտութեամբ : Իբրեւ անողոք ճշմարտախօս նա շատերին երկիւղ էր պատճառում : Նա կատաղի թշնամի էր կեղծիքին . ստախօսութեանը, պարծենկոտութեանը եւ փարիսեցիութեանը : Եկեղեցի այցելում էր շատ սակաւ, կամ երբէք, լինելով ջերմ հաւատացեալ, վասն զի չէր կարող տեսնել այստեղ կեղծ ջերմեռանդութիւնը այն ժարդկանց, որոնք ամբողջ օրը ստում էին, խարում, կողոպտում եւ երեկոները իրանց մեղքերի թողութիւնը խնդրում Աստուծոյ տանը : Նա այս ասում էր աներկիւղ ամենքին, եւ յաճախ նրա ընկերներն ու բարեկամները լսում էին նրանից դառը ճշմարտութիւններ : Նրանք չէին սիրում հօրս, այլ յարդում էին, պատկառում էին նրանից եւ վախենում, եւ ինքը բնաւ չէր փնտրում մարդկանց սէրը, լաւ զդալով նրա իսկական արժէքը : Մանկութիւնից սնուած Դալստանի լեզգիների շրջանում՝ շատ կողմերով նա բնաւ

*) Տորոն մի տեսակ արմտիք է որից պատրաստում էին կարմիք գոյն : Ուղարկվում էր այն Մոսկուա, Մարտյա, Մանչեսթեր : Այն կազմում էր մինչեւ 1872 թ. այսինքն մինչեւ «ալիքարիմ» կոչուած ներկի գիւտը, կովկասի համար խոշոր արդիւմարերութիւն :

չէր նմանվում իւր հայրենակիցներին։ Նա չունէր հայր ոչ ծածկամառվիւնը, ոչ խորամանկութիւնը։ Յիշում եմ նրա լայնաբերան գաշոյնը, արծաթապատ ատրճանակը, երկայն շախմախէ հրացանը, որ ամէն օր նա խնամքով սրբում էր իւր ճամբորդութիւնից առաջ։ Յիշում եմ նրա կատաղի նժոյգները, որոնց խնամում էին միշտ երկու երեք լեզով ծառաներ։ Ա՛յս, մանկական անուշ յիշողութիւններ։

Ծնորհիւ իւր շիտակութեան եւ անկախ բնաւորութեան, այդ մարդը Դաղստանի նման վայրի երկրում վայելում էր լնդհանուր յարդանք, նաև Ղուբայ քաղաքում, ուր նա մեծ մասամբ գտնվում էր իւր գործերով։ Յաճախ լեռնականները եւ թուրքերը իրանց վէճերի միջոցին դիմում էին նրա միջամտութեանը եւ դատավճուին եւ ոչ մի հանդամանք չէր կարող «Ուստա Մինասը» ստիպել դաւանանել իւր խզճին։

Արդ, մի այդպիսի մարդ չէր կարող իմ մէջ յարուցանել քնքոյշ զգացումներ։ Երկիւղ, յարդանք, խորին պատկառանք - ահա ինչ էի տածում դէպի այդ ամուր եւ զօրեղ կամքի տէր մարդը, որի մի հայեացքը կարող էր զսպել ամենազուսպ գաղանին։ Նրա կամքի ամրութիւնը առասպելական էր։ Իբրեւ ապացոյց ահա մի փաստ։ 1872 թւին, երբ «ալիզարին» կոչուած ներկը հնարուեց, տորոնի արժէքը ընկաւ, շատերի հետ սնանկացաւ եւ հայրս։ Կորցնելով իւր ունեցածը, նա ընկաւ եւ պարտքերի մէջ։ Այն ժամանակ արդէն ծերութեան հասակում նա նորից դիմեց իւր նախկին արհեստին, զերձակութեանը Ղուբայում եւ ուխտեց «չը տեսնել» իւր ընտանիքը մէնչեւ նորից հարատանալը։ Տասնուհինդ տարի նա ապրեց մինակ, կարօս իւր կնոջն ու զաւակներին։ Կնոջ մահն ու դստեր ամուսնութիւնն անդամ չը կարողացան կոտրել նրա յամառութիւնը եւ գրաւել դէպի ընտանիքը։ Յիշում եմ, երբ 15 տարուայ բացակայութիւնից յետոյ ես գնացի Ղուբայ նրան տեսնելու։ Նա հիւանդ էր, անկողնում պատկած, ըլջապատուած տեղացի հայերով ու թուրքերով։ Ներս ժտայ, բարեւեցի։ Ամբողջ կէս ժամ երեսիս չը նայեց։ Վերջապէս գլուխը լուռ բարձրացրեց, նայեց երեսիս եւ արտասանեց։ «Օհ, մեծացել ես»։ Եւ ոչ մի համբոյր, ոչ մի զուրգուրանք, տասնուհինդ տարի ինձ, իւր միակ որդուն, չը տեսնելուց յետոյ։ Այսպիսի մարդ էր հայրս։

Մայրս նրա հակապատկերն էր։ 23 տարով երիտասարդ իւր ամուսնուց, քնքոյշ, նրբակազմ, խոչոր կինամոնազոյն աչքերով, թանձր, գանգում մազերով։ Նրա բնաւորութիւնը մեղմ էր, բարեհամբոյր եւ անսահման հեղ։ Ես նրան պաշտում էի մանկական հոգ-

ւոյս ամբողջ թափով։ Ոչ մի վիշտ կեանքումս ինձ վրայ այնքան խորը չի աղգել, որքան նրա մահը։ Լինելով անդրագէտ, նա՛ ինձ տուեց ուսումնարան և նա՛ հողաց իմ կրթութիւնը։ Մի երկու տարի մնալով տեղական բողոքականների ուսումնարանում, անցայ Շամախու հողեւոր դպրոց եւ կարճ ժամանակից յետոյ տեղափոխուեցի արքունական դպրոց, ուր եւ աւարոել եմ իմ սահմանափակ ուսումը։

Ես ունէի մի տառ (հօրս մայրը), որի մասին արժէ մի քանի խօսք ասել։ Դա իւր որդու պէս բարձահասակ, բայց աւելի ամբակալմ մի կին էր, նոյնչափ անշեղ, շխտակ, նոյնչափ կատաղի թշնամի կեղծին և ստին, որքան իւր որդին։ Այդ կինը, որի անունը Ծաղիկ էր, իրօք փուշ էր . . . տեղական կանանց համար։ Նրանից վախինում էին ինչպէս կայծակից իւր անդուսպ ճշմարտախօսութեան չնորհիւ։ Նա չը դիտէր կեղծել, չոյել։ Նա չը դիտէր ինչ ասել է մարդկանց հաճելի թուալ։ Քաղաքում նա յայտնի էր իւր քաջութեամբ, որի ապացոյցը կրում էր իւր ձախ կողի վրայ։ Այդ մի թզաչափ սոլի էր մի մեծ վէրքի։ Մի գիշեր նա քնած է լինում իւր ամուսնացած տղիկայ տանը, պատշզամբի վրայ։ Յանկարծ, յարձակվում են վեց աւագակնեց կողովտելու նպատակով։ Աներկիւդ կինը զարթնելով փոխանակ ազմուկ բարձրացնելու, յարձակվում է նրանց վրայ։ Իւր անզուզական ուժի չնորհով նա կարողանում է աւազակներից երեքին մէկը միւսի ետեւից, փաթաթելով վերմակին մէջ, ձգել պատշզամբից այդի։ Զորբորդը վիրաւորում է նրան դաշոյնով։ Վերջապէս օգնութեան են հասնում հարեւանները։ Աւազակները փախչում են, տանելով իրոնց վիրաւոր ընկերներին։

Այդ հսկայ կինը ունէր մի խոր վիշտ - իւր կրտսեր որդին Յարութիւն անունով։ Դա մի անզուսպ, կատաղի մարդ էր, անդործ, շոայլ, քէֆեր սիրոդ։ Ամէն գիշեր խեղձ մայրը աղօթում էր իւր «կորած» որդու փրկութեան համար։ Յիշում եմ այն մռայլ ձմերացին գիշերները երր վիթիարի պատաւը գնդանեղի ծայրով յատակի վրայ զծում էր մի չըշան «չարից» փրկելու համար, և միշտ էլ երեւակայելով իւր որդուն, պարփակում էր նրան ապահովութեան մէջ։ Մի գիշեր յանկարծ ազմուկ, զգրդոց։ Միւր զաները ուժդին թափով բացուեցին եւ չորս մարդ ներս բերեցին հօրեղբօրս կիսաշոնչ մարմինը։ Յայտնուեց, որ նա կատաղած յարձակուել է իւր քեռորդու վրայ, որ իւր չափ կատաղի մէկն էր, ձեծել է, եւ՝ քեռորդին, դաշոյն ունենալով, եօթը վէրք է հասցրել նրան։ Նա ըրժըկուեց վէրքերից եւ չորս ամիս չանցած սպանուեց մի որիկայի ձեռքով։

Այսպիսով, մանկութիւնից աչքերս սովորեցին արեան։ Քիչ անցած մեռաւ իմ կրտսեր եղբայրը, չորս տարեկան Գաբրիէլը, ամենազեղեցիկ երեխան քաղաքի, որին ես սիրում էի անհուն սիրով։

Անզուսպ հօրեղբայրս աշխատասէր հօրս համար մի փորձանք էր։ 0'4, յիշում եմ նրանց անվերջ կոփուները. թուրը, դաշոյնը, յիշում եմ մօրս աղի արցունքները, տատիս գուոցները եւ վայնասունը։ Այդ բոլորն աղջում էր իմ մանկական հոգու վրայ եւ կեանքը դարձնում ինձ համար զաժան։

Իսկ շարունակ կրկնուող երկրաշարժները։ Երկրաշարժ, օ'4, ես չեմ ճանաչում աւելի սոսկալի աղէտ, քան այն։ Երբ զգում ես, որ երկիրը ոտներիդ տակից փախչում է, երկինքը մթնում, մարդիկ թուալվում են վեսնի վրայ, աները միմեանց ընդհարվում, չեն քաղաքը մի վայրկեանում աւերակ դառնում, օհ։ Այդպիսի մի երկրաշարժ է 1872 թուականինը, երբ մեր տունը աւերակ դարձաւ։

Հօրս մոայլ բնաւորութիւնը, մօրս կրած տառապանքները, հօրը մնանկութիւնը, մեր հարուստ տան կործանումը, այնուհետեւ տիրող աղքատութիւնը, հօրեղբօրս եղերական մահն աչքերիս առջեւ, երկրաշարժը, այս բոլորն աղդերով իմ մանկական հոգու վրայ, դարձրին ինձ ի սկզբանէ յոռետես։ Գուցէ դրանով պիտի բացարել իմ պեսսիմիզմը զրուածքներիս մէջ, իմ գրչի դաժանութիւնը. կեանքը ինձ միշտ թւացել է ժամանակաւոր քաւարան, թէեւ ես ի բնէ կենսախինդ եմ։

ՊԱՏԱՆԵԿՈՒԹԻՒՆ

Հօրս սնանկութեան պատճառով ես 1873 թուին ստիպուեցայ դպրոցը թողնել եւ հողալ մօրս եւ երկու քոյրերիս օրուայ պարէնը։

Երկու տարի անդործ թափառելուց յետոյ, 1875 թւին տեղափոխուեցի Բաղու, որ այդ ժամանակ նոր նոր էր սկսել ծագկել նաւթային արդինաբերութեան շնորհով։ Այստեղ առաջ մտայ իր բեւ գրագիր ոռւսաց նահանդական վարչութիւն։ Տարի ու կէս արքունական ծառայութեան մէջ մնալուց յետոյ, թողի, ուսումնասիրեցի խտալական հաշուեպահութիւն եւ դարձայ հաշուապահը յայտնի նաւթարդիւնաբերական աներում։

Այդ ժամանակ միայն սկսեցի ծանօթանալ գրականութիւն ասուած բանի հետ։ Մինչեւ տասնուինը տարեկան հասակս դաղափար չունէի նրա մասին։ Ես ապրում էի իմ մօրաքրոջ Տիկ։ Արէլեանի տանը (մեր յայտնի գերասանի մայրը)։ Նրա գաւակները վերին տոտիճանի բնթերցասէր էին եւ նրանց շնորհով ձեռքս ընկաւ Աբովեանի «Վէրք Հայստանի», Պոօշեանցի «Սօս եւ Վարդիթեր»ը, յետոյ

«Մեղու Հայաստանի», «Մշակ» լրագիրները, «Փորձ» ամսագիրը, «Հիւսիսակայլ»ի համարները, «Բնար Հայկական», «Հանդէս նոր Հայախօսութեան» եւ այլն: Ես սկսեցի կարդալ, յափշտակուեցի, եւ այդ ժամանակից զբականութիւնը դարձաւ իմ ամենապաշտելի առարկան: Հայերէն զրեթէ չը գիտէի, դպրոցը ոչինչ չէր տուել ինձ: Ակսեցի եռանդով սովորել: Փորձեցի թղթակցութիւններ գրել – նախ մայրաքաղաքի (Պետերպուրդի) «Գոլոս» (Զայն) ոռուս լրագրին, ապա Թիֆլիսի «Թիֆլիսկի Վէստնիկ» (Թիֆլիսի սուրհանդակ) լրագրին, որ խմբագրում էր Հայոցի իշխան Կոնստանդին Բէրութեանը: Այսօր էլ չեմ կարող մոռանալ իմ ուրախութիւնը երբ առաջին թղթակցութիւնս տալուեց: Ես թեւեր առայ:

Սովորելով Հայերէնը, սկսեցի թղթակցել «Մշակ»ին 1880 թւշից սկսած: Բագուն այդ ժամանակ մի յետամնաց վայր էր: Գրադարան անդամ չունէր: Ես առաջարկեցի ընկերներիս՝ Մարդասիրական Ընկերութեան բնակարանում բաց անել մի փոքրիկ ընթերցան: Ընկերներս ոգեւորութեամբ ընդունեցին առաջախրկս: Ընկերութեան խորհուրդը խոստացաւ աջակցել, տուեց մեզի մի ընդարձակ, լուսաւոր սենեակ, հրաւիրեց ինձ զրապահ: Առաջին տարին բերել տուեինք մոտ 500 ոռուրու սուսերէն եւ Հայերէն զրքեր: *)

Հայ զրքերի հետ արդէն ծանօթ էի: Ոռուս զրքերը մեծ մասամբ փիլիսոփայական էին – այսպէս էր կամեցել Մարդ. Ընկ. Խորհրդի անդամ Բէգլեար Ստեփանեանը, մի շատ զարգացած ուսումնասէր մաքր, որ այդ ժամանակ արքունական դպրոցների փոխվերատեսուչ էր: Այսուամենայնիւ ես ազահութեամբ յարձակուեցի ոռուերէն գրքերի վրայ, որ մեծ մասամբ թարգմանական էին եւ սկսեցի միմեանց խառնել իմ հում պատանեկան դլխում Կունօ Ֆիչէր, Ռիքարտո, Զօն Ստիւարտ Միլլէր, **) Սովենսէր, Մալթուս, Սէն Սիմոն, Դէկարտ եւ այլն:

Շատ բան, հարկաւ, չէի հասկանում, բայց ճգնում էի հասկանալ: Ես զեկուվար չունէի, յանձնուած էի ինքս իմ կամքին ու ճաշակին:

Հայ զրքերն ու լրագրները շատ վաղ գաղարեցին ինձ գոհացում տալ: Ես յափշտակուեցի ոռուսականով: Ռաֆֆի, Պոօչեանց շատ չուսով կորցրին իրենց հրապոյրը: Ինչ ոգեւորութեամբ կարդացել էի Արտիւանին, Պատկանեանին, Նալբաննդեանին, նոյն արա-

*) Այժմ այդ գրադարանը ամենահարուստն է ամբողջ Կովկասում:

**) Խօսքը, անշուշտ, Զ. Ս. Միլի մասին է. ԽՄԲ.

դութեամբ չքացան նրանք իմ ուզեղից, երբ ծանօթացայ Գօգոլին, Դոստոեվսկուն, Տոլստոյին, Տուրգենիվին, Լեսմօնտովին, Պուշկինին եւ այլն: Օ՞ո, որքան աղքատ, որքան ողորմելի թւաց ինձ հայ գրականութիւնը եւ որքան զուրկ գեղարւեստական արժէքից: Ինձ ապշեցրեց առանձապէս հողերանութեան, նոյն իսկ տարրական հոգերանութեան բացակայութիւնը հայ վէպի, մանաւանդ Ռաֆֆիի վէպերի մէջ: Սակայն չուտով ուռւս հեղինակներն եւս իրենց հերթին պիտի տեղի տային Շէքսպիրին, Գէօթէին, Սերվանդէսին, Շիլէրին, Լեսինդին, Բերնէին, Հէյնէին, Դիքէնսին, Թէքէրէին, Վալտեր Սկոտին, Վիքթօր Հիւզոյին եւ այլն:

Ուուս վիպասանների մէջ ամենից աւելի սիրել եմ Դոստոեվսկուն, նրա խորութիւնը եւ հզօրութիւնը, Տուրգենիվին, նրա ոճը, որ այնքան գեղարւեստական է իւր կլասիկ պարզութեան մէջ:

Ֆրանսիական վիպասաննութեան մէջ հրասլուրիել եմ ամենից աւելի Վիքտօր Հիւզոյով:

Բարդակի առնական հանճարը ինձ սարսափի է պատճառել: Հիացմամբ եմ կարդացել անդիմական վիպասաննութիւնը, մանաւանդ անդուգական Դիկկենսին եւ Վալթէր Սկոտին: Գերմանական վիպասանների մէջ չեմ յիշում մէկը, որ իձ դրաւած լինի: Շպիլհագէնի մէծահատոր վէպերը կարդացել եմ իրրեւ սիրուն դասախոսութիւններ:

Ասողներ կան, թէ Զօլան աղդել է ինձ վրայ: Այդ ես սխալ եմ համարում: Կարդացել եմ այդ հոկայ դրչի արդիւնքները մէծ հետաքրքրութեամբ, բայց բնաւ չեմ սիրել նրա ծայրակեղ բնապաշտութիւնը:

Իմ գործերը բոլորը մի մի եղելութիւններ են կեանքից վերցրած եւ փոփոխած գեղարւեստի պահանջների համեմատ:

Ինձ համարում են բեղմնաւոր գրիչ: Այս, ծոյլ հեղինակների համեմատ, որոնք շատ վաղ են հանգստանում իրանց դափնիների վրայ, դուցէ ես բեղմնաւոր եմ: Բայց եւրոպական հեղինակների համեմատ, աստուած իմ, որքա՞ն, ծոյլ եմ, որքա՞ն ծոյլ: Ինձ միշտ զայրացրել է հայ հեղինակների ծուլութիւնը: Միակ փոքր ի շատէ բեղմնաւորը Ռաֆֆին էր: Եւ մեր ծոյլերը, իրանց անդործութիւնը արդարացնելու համար, ասում են, թէ պէտք է քիչ դրել, որսէս զի լաւ գրել: Բայց մեր քիչ դրողները շատ դրողներից բնաւ ոչնչով բարձր չեն:

Ընդհակառակը փաստեր կան, որ հակառակն են ապացուցանում: Ծուլութիւնը մեր հեղինակների ունի ե՛ւ ուրիշ արդարացում: Նրանք սպասում են «Մուսաների» այցելութեան, բայց մուսաները

չեն գալիս : Նրանք ծոյլ են եւ կարդալում եւ կեանք ուսումնասիր բելում : «Չենք ուզում որ օտար հեղինակները մեզ վրայ ազդեն, ուզում ենք մնալ ինքնուրոյն», ասում են ծոյլերը : Եւ մարդ մի վայրկեան կարծում է, թէ իրաւ նրանք արդարացի են : Սակայն մոլորութիւնը իսկոյն աչքի է ընկնում հէնց որ մի թեթեւ հայեացք ես ձում այդ՝ իրանք իրենց ինքնուրոյն համարող հեղինակների գործերի վրայ : Տեսնում ես, որ որքան հայ հեղինակը անդարդացած է, անծանօթ օտար գրականութեան, նոյնքան նա զուրկ է ինքնուրոյնութիւնից :

Իմ բնաւորութիւնն է մեղաւոր, որ ոռուսահայ մամուլը միշտ անարդար է եղել դէպի ինձ, միշտ հալածել է ինձ : Հօրիցս ժառանգելով անպայման անկեղծութիւն, ես երբէք չեմ քաշուել ճշմարտութիւնն ասել մարդկանց իրեսին : Ես չեմ չոյել, չեմ կեղծել, ոչ մի կուսակցութեան չեմ յարել : Զուտ գրականութիւնը համարելով բարձր ամէն ինչից ե՛ւ կուսակցութիւններից, ե՛ւ մամուլից, եւ դպրոցից եւ թատրոնից եւ նոյնիսկ եկեղեցուց : Իմ հասկացածի չափ վերաբերուել եմ միշտ քննադատորէն դէպի կեանքը եւ դէպի մարդիկ :

Գրականութեան աւորէն զաւակներին ես ցոյց եմ տուել իրանց տեղը, անքանքարին հալածել եմ, եւ ահա տարիների ընթացքում կազմուել է թշնամիների մի ահադին վոհմակ, որ չի գաղարում ինձ խայթել եւ պիտի դեռ խայթի մինչեւ մահս : Սակայն վաղուց է, որ ես անզգայ եմ դէպի այդ խայթոցները :

Բայց ես երջանիկ եմ մի քանով . այս է, որ գրականական եւ անձնական հակառակորդների մէջ չկայ ե՛ւ ոչ մի տաղանդաւոր մարդ :

1883 թւից մինչեւ 1905 թ. ապրել եմ Թիֆլիսում :

1895 թ. բանտարկուել եմ տաճկահայ դատի պատճառով : Երեք ամիս բանտ եմ նստել, յետոյ երկու տարով աքսորուել Ռուսիա :

1905 թւին զաւակներիս ուսման համար տեղափոխուել եմ ընտանիքով Պարիզ եւ մնացել այնտեղ մինչեւ Օգոստոս 1910 թ. : Հինգ տարուայ ընթացքում երեք տարի շարունակ այցելել եմ Սօրբօնը : Լսել եմ դասախոսութիւններ Դիւրդէյմի փիլիսոփայութեան մասին, Օլառի պատմութեան մասին, Էմիլ Ֆադիէլի գրականութեան մասին, Կոռւազէի՝ յունական քաղաքակրթութեան մասին, Դիմա-

յի՝ փորձնական հոգեբանութեան մասին և Մարթայի՝ լատինական պերճախօսութեան մասին :

ԴԵՊՔԵՐ

Դուք պահանջում էք, սիրելի Անտոնեան, անեկդոտներ իմ կեանքից : Ցիշում եմ միայն երկուուր:

ա.) — Իմ հայրենակիցները, Շամախեցիները ի բնէ հումօրիստ են եւ կատակարան :

Շամախուց հեռանալուց 15 տարի անցած մի օր Թիֆլիսի վողոցներից մէկում, հանդիպում եմ հայրենակիցներիցս մէկին, որ մօրս բարեկամն է եղել :

— Բարով ա տղայ — դառնում է ինձ հայրենակիցս Շամախու բարբառով — զու Մինասի տղան չե՞ս :

— Հրամանքս, Մինասի տղան եմ — պատասխանում եմ ես նոյն բարբառով :

— Հի՞նչ ես անում իստեղ, հի՞նչ բանի՞ ես :

— Գրում եմ :

— Միրզա ե՞ս : Ո՞ր դաֆթարխանում :

— Միրզա չեմ, գրող եմ :

Հայրենակիցս նայում է երեսիս, ժողովում հեղնարար եւ ապա .

— Մարդ կայ, որ դերձակ է, մարդ կայ, որ կօշկակար է կամ նալրանդ, փափախչի : Քո սահահաթիւ անունն ի՞նչ է :

Կամենալով հայրենակիցիս շիոթեցնել, պատասխանում եմ .

— Վիպասան :

— Վիպասանը հի՞նչ ա անում :

— Վիսկասանը աղջկան սիրահարեցնում է տղայի վրայ տղային աղջկայ վրայ, յետոյ նրանց նշանում է, պատկում : Զեն հաւանում միմեանց, բաժանում է նրանց : Ուրիշի հետ պասկում եւ այլն եւ այլն :

— Եավա՛չ, եավաչ, կանգնիր . — ընդհատում է հայրենակիցս . — Հասկացայ, մօցիքուր ես, չարանդիղի, միջնորդ : Վայ քո հօր տունը չը քանդուի, տղայ, էլ գործ չը կա՞ր որ քինացիր չարանդիղի դարձար : Հեռու, հեռու, մեղանից . . .

Եւ հայրենակիցս, դառը վշտացած, հեռացաւ, համոզուած, որ արհեստների մէջ ընտրել եմ ամենախայտառակլ :

բ.) Մի ուրիշ անգամ Բագուի վողոցներից մէկում պատահում եմ դարձեալ մի հայրենակիցիս : Նա հարբած է, երերուելով մօտենում է ինձ եւ փաթաթվում վղիս :

— Դուք ս՞վ էք, սլարոն — հարցնում եմ ես, հազիւ ազատուելով նրա գրկեց :

— Ե՞ս : Ես երեքից մէկն եմ :

— Երեքն ո՞վ է :

— Շահարը Շիրվան քաղաքը աշխարքին երեք մեծ մարդ է տըւել, մինը ես եմ. մինը դու ես. մինն էլ Զարդեարը : Աշուղ Միխակն եմ. մոխարազներ ունիմ դաւթար-դաւթար : Գրիր, գրիր, թողազրը փառաւորուի :

Ասաց հայրենակիցս եւ հեռացաւ :

Ուրիշ անեկոտներ չեմ յիշում :

Եթէ գրուածքիս մէջ կը գտնէք աւելորդաբանութիւններ, ներեցէք, շաապով եմ զրել :

Բարի եղէք մի տեղ աւելացնել, որ միշտ հայ մամուլից հալածուած, միշտ վայելել եմ ուստ մամուլի խրախուսանքը եւ պաշտպանութիւնը :

Դարձեալ ինդրում եմ այս բոլորը գրել ձեր կողմից :

Ընդունեցէք մի անգամ եւս խորին չնորհակալեքս :

Անսահման յարդանքներով

24 Յուլիսի 1910

ՇիվանջԱԴէ

Լ. Պ. - Վ. Օ. Զուիցերիա

(Շիրվանզադէի նամակները կը տանի յաջորդ անգամ)

